ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՁԱՏ ՁԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԷՏՈՒԸՐՏ ԵՒ ՁԱՆԷԹ ՄԱՐՏԻԿԵԱՆ ՈՐ Ի ՏԻԹՐՈՅԹ, ԱՄՆ

Սիրելի՛ Տէր եւ Տիկին Մարտիկեաններ,

Ուրախ ենք մեծապէս՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու Ձեզ եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու բարեմաղթանքները բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակներիդ:

Ազգային եւ եկեղեցական մեր կեանքում մեծ, գովարժան վաստակ ունի Մարտիկեան բարեգործ ընտանիքը, որ սերունդէ սերունդ յաջորդականութեամբ իր սրտաբուխ ընծայաբերումներով ու ազնիւ յանձնառութիւններով ծառայում է յանուն հաւատաւոր մեր ժողովրդի բարօրութեան եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու յաւէտ պայծառութեան:

Մենք ուրախ առիթ ենք ունեցել ճանաչելու Ձեր ծնողներին, հաղորդ դառնալու նրանց եկեղեցասէր ու ազգասէր ոգուն, նրանց աստուածահաճոյ գործերին, որոնք մշտապէս աղօթքով ու երախտագիտութեամբ են յիշուելու հայորդեաց հոգիներում: Այսօր գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր ծնողաց լուսաւոր օրինակով՝ Դուք, սիրելի Էտուըրտ եւ Ճանէթ, ապրում ու գործում էք Հայրենի մեր երկրին, մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն ծառայելու ազնիւ նուիրումով ու նախանձախնդրութեամբ:

Մենք բարձրօրէն գնահատում ենք հաւատաւոր ամոլիդ երկարամեայ ազգօգուտ վաստակը: Դուք բարեսիրական բազմաթիւ ծրագրեր էք իրականացրել մեր երկրում, օժանդակել Հայաստանի սահմանամերձ շրջաններում ապրող կարիքաւոր հայորդիներին: Ձեր բարեգործութիւնների

արգասիքները յոյս ու լաւատեսութիւն են պարգեւում դժուարութիւնների մէջ ապրող մեր ժողովրդի զաւակներին:

Նախանձախնդիր նոյն ոգով Դուք դրսեւորել էք նաեւ Ձեր որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Սուրբ Էջմիածինը՝ հոգեւոր նուիրական կենտրոնը աշխարհասփիւռ հայութեան: Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Դուք սիրով ստանձնեցիք նաեւ Սուրբ Էջմիածնի «Երեմեան» միաբանական շէնքի նորոգութեան հովանաւորութիւնը՝ նոր կեանք պարգեւելով պատմական կառոյցին: Ձեզ պէս հաւատաւոր Մեր զաւակների ազնիւ յանձնառութիւններով պայծառանում է Մայր Աթոռը՝ շարունակելով իր Տիրաւանդ առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում:

Բարձր գնահատելով Ձեր վաստակը մեր Սուրբ Եկեղեցու եւ հաւատաւոր ժողովրդի կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջ ԱՄՆ Հայոց Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ նոր ձեռնարկներով:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2016 եւ ի թուին հայոց ՌՆԿԵ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 968